Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 30-ի N 848 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ, ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության փրկարար ուժերի մեկնելու հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փրկարարական աշխատանքների մեկնող փրկարար ուժերի կազմում, բացի Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ծառայողներից, կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, կազմակերպությունների՝ «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով որակավորված փրկարարները և այլ մասնագետները:

## II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՄԵԿՆԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փրկարարական աշխատանքներին փրկարար ուժերն ընդգրկելու համար հիմք են հանդիսանում՝

1) աղետից տուժած երկրի հետ նախապես կնքված արտակարգ իրավիճակներում համագործակցության, փոխօգնության համապատասխան համաձայնագիրը.

2) աղետից տուժած երկրի կողմից ուղղակի կամ միջազգային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացված օգնության պաշտոնական դիմումը:

4. Աղետից տուժած երկրի համապատասխան մարմինների հետ փրկարարական աշխատանքներում Հայաստանի Հանրապետության փրկարար ուժերի ներգրավման նպատակահարմարությունը պարզելուց հետո, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փրկարարական աշխատանքներում Հայաստանի Հանրապետության փրկարար ուժերի ներգրավման որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջարկությամբ:

## III. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՄԵԿՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը՝

1) սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փրկարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ փրկարարական ջոկատների, այդ թվում՝ պահեստային ջոկատների, կառուցվածքը, կազմը և պատրաստականության բերման ժամանակը.

2) կազմակերպում է նախապատրաստական միջոցառումներ փրկարար ուժերն աղետից տուժած երկիր ուղարկելու նպատակով.

3) համակարգում է փրկարար ուժերը Հայաստանի Հանրապետությունից դուրս ուղարկմանն ուղղված հանրապետական գործադիր մարմինների կողմից իրականացվող միջոցառումները.

4) նախապես՝

ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն է ներկայացնում ռազմական նշանակության արտադրանքների ցանկը՝ արտադրանքների ժամանակավոր արտահանման և ներմուծման լիցենզավորման նպատակով,

բ. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում երկակի նշանակության արտադրանքների ցանկը՝ արտադրանքների ժամանակավոր արտահանման և ներմուծման լիցենզավորման նպատակով:

6. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը՝

1) կազմակերպում է աղետից տուժած երկրի արտակարգ իրավիճակների ոլորտի լիազոր մարմնի հետ փոխգործողությունը և համագործակցությունը.

2) աջակցում է երրորդ երկրի տարածքով, անհրաժեշտության դեպքում, փրկարար ուժերի արագ տեղափոխմանը.

3) ապահովում է աղետից տուժած երկրում հավատարմագրված Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունից աշխատողի տրամադրումը՝ աղետից տուժած երկրի արտակարգ իրավիճակների ոլորտի լիազոր մարմինների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ համագործակցության ապահովման և փրկարար ուժերին խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով.

4) աջակցում է փրկարար ուժերի անձնակազմին աղետից տուժած երկրի մուտքի վիզաների տրամադրման հարցում:

7. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը Հայաստանի Հանրապետության սահմանային անցակետերում ապահովում են միջազգային պայմանագրերին համապատասխան պարզեցված կարգով փրկարար ուժերի անձնակազմի սահմանահատման գործընթացները:

8. Աղետից տուժած երկիր մեկնած Հայաստանի Հանրապետության փրկարար ուժերի ղեկավար կազմը, աղետից տուժած երկրում հավատարմագրված Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության հետ համագործակցում է՝

1) աղետից տուժած երկրի ժամանման վայրից դեպի փրկարարական աշխատանքների իրականացման վայր հասնելու համար աշխատողի, ուղեկցողի և տրանսպորտային միջոցների ապահովման ուղղությամբ.

2) աղետից տուժած երկրում ստեղծված իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և տեղանքի վերաբերյալ համապատասխան քարտեզներով ապահովման ուղղությամբ:

## IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՄԵԿՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

9. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծագած արտակարգ իրավիճակների դեպքում, փրկարար ուժերի մեկնումն աղետից տուժած երկիր, ելնելով նպատակահարմարությունից, իրականացվում է ավտոմոբիլային, երկաթուղային կամ օդային տրանսպորտի միջոցով:

10. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փրկարարական աշխատանքներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության փրկարար ուժերն օդային տրանսպորտով ուղարկելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը նախապես պայմա-

նագրեր է կնքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և ազգային ավիափոխադրողների հետ և, անհրաժեշտության դեպքում, ապահովագրում տրանսպորտային միջոցը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացվող միջոցների հաշվին:

11. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փրկարարական աշխատանքներում Հայաստանի Հանրապետության փրկարար ուժերի ներգրավման հետ կապված՝ անձնակազմի տասնօրյա ինքնաբավ կեցության, ճանապարհորդական փաստաթղթերի, անձնակազմի ապահովագրման ու գործուղման, գույք-սարքավորումների և անձնակազմի տեղափոխման նպատակով տրանսպորտային միջոցների վարձակալության ու այլ ծախսերը, այդ թվում՝ փրկարարական (մարդասիրական) առաքելության ընթացքում արտերկրում չնախատեսված այլ ծախսերի համար 50000 ԱՄՆ-ի դոլարի չափով արտարժույթի օպերատիվ ռեզերվի ձևավորումը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացվող միջոցների հաշվին:

12. Փրկարարական ուժերի գործուղման՝ օրապահիկ, գիշերավարձ և այլն, ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան:

13. Սույն կարգի 5-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված լիցենզավորման տրամադրման համար Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից վճարներ չեն գանձում՝ Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից պետական տուրքի հետագա փոխհատուցման պայմանով:

14. Սույն կարգի 11-րդ կետում նշված արտարժույթի օպերատիվ կանխիկ՝

1) օպերատիվ ռեզերվի օգտագործման թույտվություն տալու իրավասությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին.

2) օպերատիվ ռեզերվն օգտագործվում է բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծագած արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացքում:

15. Աղետից տուժած երկրից Հայաստանի Հանրապետության փրկարար ուժերի վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը սահմանված կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ գործուղման արդյունքների, կատարված ծախսերի, այդ թվում՝ օպերատիվ ռեզերվից, վերաբերյալ.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարված ծախսերի, այդ թվում՝ օպերատիվ ռեզերվից, վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ